



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2024 թվականի N 277 - Ա

«ԽՆԱԾԱԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 226-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտավազդ Աբրահամյանի 2024 թվականի հուլիսի 18-ի գրավոր բացատրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

«Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված և տնօրենին վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտավազդ Աբրահամյանի նկատմամբ կիրառել «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2024-07-23 17:07:29 GMT+4
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

